ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՐԹԱՍԱՆ

Գին՝ 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՄԱՐՏԻ 12-ին. Թիֆլիս. № 11.

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԸ ՓԱԽՉՈՒՄ ԵՆ

Համալսարանական բեֆորմաներ

Лит. С. Быхова

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI Տարի

ԽԱԹԱԲԱԼԱ

VI Տարի

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների։

Անհրաժեշտ թերթ բոլոր ընտանիքների համար

«ԽԱԹԱԲԱԼԱՆ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի։ Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերդ ուզի։

Հասցէն՝ Тифлисъ Музейный пер., Редакція „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Gaucas edaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆԵԳԻՆՆԷ

Տարեկան	5 ր.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱԹԱԲԱԼԱ»-Ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ր.

Տարեկան	12 ր
Կէս տարին	6 ր.
Երեք ամիսը	3 ր. 50 կ.
Մէկ ամիսը	1 ր. 20 կ.

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75% զեղչ

Զրի կարդացողներին պէտք է նկարենք գլխիվայր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ՕՐԱՑՈՑՑ

1911 ՄԱՐՏ 31 օր

12

Սրբ բան ծախելու վնաս իսկ, տամ ինձ բան մի դեռևս։ Շ. Ալիշան

Զի ամենայն ոք զանձեալն զանձեսն ամենայն զանձեսն։ Հովհաննես Մանդակունի

Суббота ՇԱԲԱԹ Ցանցատ

Հունիսի 26

13 (կիր.) Գեղեալ Աղաբաջին այսօր կրգնայ Փարիզ, ամբանոց գնացող Բագի կանանց համար 3 վագոն վերջին մօդայի շալւարներ բերելու։

14 (բ. շ.) Թիֆլիսի կանանց մէջ խլրտում է առաջացել Պրագայում, կանանց շալվարների դէմ տեղի ունեցած անկարգութիւնների պատճառով։

15 (գ. շ.) Լրագրները անցեալ օրը հաղորդեցին, որ մի բժիշկ գտել է 707 դեղ, որի միջոցով բժշկւում են կուարար անձանց ուղեղի բացիները։

16 (դ. շ.) Բարերար անձանց ուշադրութիւնն ենք հրաւիրում մի խեղճ մարդու վրայ, որը առաջւայ 5 տեսակ կերակուրների տեղ ներկայիս 2 տեսակով է եօլա գնում։

17 (ե. շ.) Ինչպէս լսում ենք քաղաքային վարչութիւնը մինչև այսօր բռնել է 15,000 մեծ, 18,000 միջակ և 20,000 մանր մկներ։ Որսը շարունակւում է։

18 (ուրբ.) Այսօր մի տիրացու քահանայ կրձեռնադրւի։ Հարկաւոր կրգայ մի կճում իւղ և 2 գլուխ շաքար։

Ցիշատակարան

Ժլատի համար փոդն 2-րդ Աստուածն է, իսկ կնոջ համար 2-րդ աստուածը թագա մօդան է։

Ատաղաէտ—տոմարագէտ և օրացոյցագէտ

Փարեմուզ

ԴԻՍՊԵՐ ԿԱԼԱՏՈՒԶՈՎԸ ՄՈՍԿՎԻՈՒՄ

—Օ՜, ում եմ տեսնում, բարով բարով Գասպար Կալատուզով. էդ ինչ ես շըշմել քաղաք չտեսած գիւղացու պէս։ Եկել ես մանկավարժութիւն ուսումնասիրես... խելքի աղքատ մեծավարժութիւն սովորիր է... Պ. Կալատուզով, հարբած կամ ցնդուած չես...

—Մենք քարեր ենք, փայտեր ենք, մեռած ենք Կովկասի բոլոր ժողովուրդս։

Առանց իմ հարցերին պատասխանելու և ուշադրութիւն դարձնելու զարմանքիս՝ նա շարունակում է այլայլուած, յուզուած, ձեռքերի զանազան շարժումներով, գլխի տատանումներով, ոտները գետնին զարնելով, փոքրը մէկ առաջ ուղղելով, մէկ մէջքից կռանալով. մի խօսքով այդ բոպէին նրա մարմնի ամէն մի անդամը գործողութեան մէջ էր. նա սկսեց ճառել։

—Տօ արլաբուդիներ. ես նախանձից ուզում եմ նոյնիսկ տրաքւել, խելքս կորցնել...

—Պ. Կալատուզով, այդպէս մի բարկանաք, կթթւած կոտանաք, սրտի պայթումից կըմեռնէք. հանգիստ պատմեցէք, տեսնենք բանն ինչումն է։

—Կոյր էք, այ չէք տեսնում Ռուսաստանն ինչպէս ոտտեռապէս ու կուլտուրապէս հսկայական քայլերով առաջ է գնում։ Այ, այ, տես կենդանի օրինակը. մեր հին անդրվարտիկները Կովկասում լաթավաճառների վրայ 15 կամ 50 կ. ծախում ենք, հարմարեա դէն ենք գցում, իսկ այստեղ կանայք տղամարդկանց դրութիւնը մանելով, էժան գնով ծախելու փոխարէն իրանք են հագնում։ Մենք ամառը շոգից այրւում ենք մահուդէ անդրվարտիկների մէջ, իսկ այստեղ տղամարդիկ մտածում են ամառը փոխարինաբար հագնել կանանց վարդիկները, որ աւելի կարճ ու բարակ է, հով կըպահէ ոտքերը։ Ես մեր տըգէտ հայրենակիցներին չեմ նայի, գնացի Կովկաս թէ չէ իսկոյն... պիտի սրանց օրինակին հետևեմ։ Առաջադիմում են նաև մայրերը, հին կացութիւնից ձանձրացած նրանք վերանորոգում են ռոմանտիկական կեանքը ուրիշ տղամարդկանց հետ, իսկ օրիորդները դարձել են մայր-օրիորդներ։ Մեր ուսանող երիտասարդներն էլ են առաջադիմում։ Մի ժամանակ, որ փթած գաղափարներ էին արծարծում. ազգ... եկեղեցի... մայրենի լեզու... անարատ պիտի պահել. այսօր թքում են իրենց ծակ ազգասիրութեան վրայ, ամուսնանանում են օտարազգուհիների հետ և նոյնիսկ պսակը կատարում նրանց եկեղեցում։ Իսկ հայ օրիորդները, որ մի ժամանակ հայ երիտասարդների սիրոյ պատճառով սիրային երգեր էին յօրինում, այստեղ վերջապէս հիասթափեցան, ու տեսան, որ հայ երիտասարդը տգեղ է... տգէտ է... կոպիտ է... նա օրինաւոր ամուսին դառնալ չի կարող։ Եւ կապակցւում են օտարազգիների հետ միաժամանակ և ընդմիշտ ազատւելով ամօթածիծաղաշարժ հայրենի լեզուից։

—Օ՜, եղբայր, հա՜ թէ ինչ կընշանակէ մայրաքաղաք Ռուսաստանի սիրտ Մոսկուա, այստեղ են եղել բոլոր սրտերը... իսկ մենք ողորմելիներս գնացել ենք Կովկասի խաւար երկրներում վայր ընկել, ու ապրում յաւիտեան կոյր...

Այստեղ պ. Կալատուզովը մի այնպիսի

խոր ցաւատանջ հառաչանք քաշեց՝ կարծես մսից կտրեցին...

—Ապա, ապա մէկ նայիր Է էս շքեղ խանութներին... որքան ադամանդ, որքան ոսկի, որքան արծաթ. բոլորն էլ արեգակի ճառագայթներ են արձակում պսպղում, իսկ մենք այնտեղ մի կտոր սև հացի համար էլ կեանք ենք տալիս... Տօ, որ մէկն ասում, որ մէկն աչքից թաղնեմ. կեանք, շարժում, առաջադիմութիւն։ Միշտ փթած նեխած մեզ պէս մի կեանքում չեն ապրում, շարունակ փոփոխութիւն, նորութիւն...

Պատմութիւնից յայտնի է, որ առաջ այստեղ մարդիկ էին ապրում. այժմ տեսնում, եմ որ նրանք մարդկութիւնից ձանձրացած կամաց-կամաց անհանանում, այժմ ամեն տեսակի, ամեն տեսի անասունների մորթիներ են առել իրանց վրայ, մօտիկ ապագայում այդ մորթիներն անրաժանելի կպած կլինին նրանց մարմնին։ Այն ժամանակ կըգանք Մոսկուա՝ գայլի, արջի, աղուէսի, կատուի, ձիու, և այլ անասունների տրս...

Ես Գասպար Կալատուզով կնքուեցի, էդպէս էլ մնացի մինչև հիմա, պատճառն այն է որ մնացել եմ Կովկասում և չեմ լուսաւորուել, բայց մեր եղբայրներն այստեղ են գալիս թէ չէ՝ Միրզոևիչը—Մինասյեվիչ է դառնում, Բարսեղը—Բարիս, Մանիշակ բաջին—մադամ Լեոլա, Ասխապետ այանը—Ելիզավետա Իվանովա... ու էդպէս զեղեցիկ զարդարուն անունների փոխւում։

Այսպէս Գասպար Կալատուզովը Ռուսաստանի առաջադիմութեան նախանձով բորբոքած՝ գնաց տուն, ինձ էլ հետը տանելով։

Այդտեղ նա մի բաժակ սառը ջուր խմելով մեղմացրեց իր ցասումը յետագէմ կովկասեցիների վրայ և պառկեց քնելու։

Ես նրան տարուեցի, թէ երբ գնայ Կովկաս, իր հետ այդ լուսաւոր ջանը տանելով՝ այնտեղ էլ կարող է լուսաւորել, նախանձելի Կովկաս դարձնել։

Նորան թողեցի երազ ցնորքների մէջ ու դուրս եկայ։

Քերրо



ՀՈՍՀՈՍԻ II-Դ ՆԱՄԱԿՆ ՕՐԻՈՐԴԻՆ

Ցարգելի օրիորդ Աստղիկ!

Նամակս քեզի տալէն վերջը, սիրտս սանք վեր ու վար կելնէր-կիջներ, թա ատ անծանօթ աղջիկն իմ նամակը պիտի պատռէ՞, թէ՞ աղուոր սրտին վրան պիտի պահէ. սանք կմտածէի զինքս գիս։ Ասանք մտածելէն քալեցի «Արմաւիր» ճաշատուն։ Հոն տեսայ աներձագիս, Իկիտխանենց Ալէքին, ատոր մորքուրին թոռին սիրած եմ։ Զիս անոր առաջ ուզում էի խնդալու ձև մը տալ դէմքիս, զոր չկարծէր, որ օտար տեղ ըլլալով տխրած եմ, երկիրը թողած աղջկամ մը կարօտով։ Հաց ուտելու ատեն, կարապետ աղան, գրամոնին երգել տուեց աղգային երգեր, ատ երգերը անքան դուր կան գիս, որ չկըրցայ իմանալ, թէ ինչպէս կերայ ուսով չորպան ու տոլման։

Հաց ուտելէն վերջը քիչ մը քալեցի աս ու ան թարաքը. ուրթը ընկնելու ատէն թէզմ գնացի տուն, անոր համար որ, ատ օրը դրախտիրեն չայ առնելու սրան իմս էր։ Ընկերներով չայ խմելէն վերջը, պառկեցայ քնելու. ատ գիշերը երազ մը տեսայ, գիս կըթւար նստած եմ «Ռուժինի» աղուոր կաթնատունը։ Հոն ինձի հրամցուցին ֆինճանով զաֆէ մը, հետն ալ եաղլու։

Նոր էի սկսել ուտել-խմել, սակայն դեռ բան մը չկերած վերջացրած, ճվճըւալէն բիրդան ինձի զարթեցուց Անդրանիկը, ըսելով թէ թախտիս տակը «չումի» մուկ է մտել. քնաթաթան եւ. հինդ հոգով, երեք սահաթ չարչրրվեցանք, անճախ սատկեցուցինք ատ անտէր մուկին։ Վախենալուս համար ողջ գիշերն ալ չկըրցայ քնել։ Առաւօտուն տեղիցս վեր կեցայ թէ չէ, ձևոս առի Զմշկէնց Մակարի օրացոյցը. տեսնեմ ինչ կըսէ իմ տեսած երազիս. բաց ըրի կարդացի, թէ երազի մը մէջ խմոր ուտելը աղէկ դամաթ է»։ Ըսել է իմ կերածը եաղլու ըլլալով, շատ աղէկ դամաթի պիտի հանդիպիմ։ Ա՛ս քաղաքը պանիան ու փարան շատ ըլլալով, հարկաւ մէկը օր մը ճամփան մի քանի մը հաղար մանէթ կորցնէ կը։

Ատիկ իմ դամաթս որ ըլլայ, ինչ աղուոր բան կըլլայ... Ատ փարայէն ամենից առաջ մատնի մը շինել կուտայի Մէյթաճոնց Մկօին. թող խեր տեսնի ինձմէն, անոր համար որ, իր մէն պատիկ աղբարը պսակուած չլլալով, հարկաւ փափակ կըզգայ պսակուելու։ Աղուոր ձեռմ հալաւ ձևել կուտայի Զանոյենց Օնէսին. ատ ալ թող խերուի, նշանուելու մանչ մը է։ Ամերիքական քոշ մը կարել կուտայ Պոշրոդազէնց Արտաշին. ատիկա մուրազի վրայ է, սիրած է Փէփէլի աղջիկը, զոր կուզէ փախցունէ։ Աղպէս աղէկ կըլլայ։ Տանը թաղայ ֆէս մը ունենալով, կարիք չէք ըզգա նորը գնելու. ասանք «շիք» հագնուած որ տեսնէիր, զենդ գիս մէկէն կը սիրէիր։

Ա՛ս մաքով խանութ քալեցի, ճանապարհիս բիրդան ճանրան դէմս էլաւ։ պատրաստ ոսկիմը, նամակ մը հրամցուց գիս. լսելով «ատ նամակը քուրս ճամբեց». մէկէն ճէպէս հանեցի երկու քափէկ ու տուի անոր. ըսի սեմմիչկայ առնէ ուտէ։ Ըսել է երազս կատարուեցաւ. սև զայֆէն, թեզ ըսել է. եաղլուն ալ դամաթ է...

Ատ քու նամակը, 26 անգամ կարդացեր եմ, անակ կոր թէ որ մէկը հարցնելու ըլլայ ինչ է գրած նամակին մէջ, առանց աշելու մէպաշ անգիր կսեմ։ Ա՛ս մէ փափակս կատարուելէն վերջը, հարկաւ մէկալ փափակներուս ալ Աստուած կըհասցէ կոր։

Ընդունէք իմ քաղցր և անգին բարևներս, անոր համար որ՝

Ձեր աչքերը գրաւիչ են։

—Ատ ալ իմ ճաշակին համամիտ է։

Ձեր ոնքերը չափազանց աղուոր են գըծուած։

—Ատիկայ ինձ շատ դուրեկան է։

Ձեր շուրթերը միշտ կըխնդան։

—Ատ ալ իմ սրտովս է։

Ձեր այտերը կարմիր են։

—Ատիկա ինձ շատ հաճելի է։

Ձեր կուրծք անթառամ է։

—Ատ ալ իմ դամաթն է։

Եւ Ձեր ձեռքերը, ձեռքերը, օ՜ Աստուած, որքան փափկիկ են ու գիրդ։

—Ես կըսիրեմ աղպիսի ձեռքեր, աղուոր ու գիրդ։

Ասանք նամակով խօսելով, ալ վախենալու բան մը չկայ զոր մենք յատիտան ծանօթ ենք մնալու։ Ներողամիտ կըլլինիք, որ ատ նամակս գրած եմ մեր սարժնի Անուշաւանի խանութը, անոր համար որ, օթախիս ընկերները չիմանան ու քեզի ձեռքես չառնեն։

Քու զրկած սառէսը ցըցուցի Սահակէնց Լեոնին, անիկա ըսաւ որ, աղ տեսակ մայլայ չկայ Թիֆլիսում։ Հիմի չիտեմ ինչպէս էնէմ փոշտան ցկեմ, թէ նորէն իմ ձեռքով քեզի հրամցնեմ։ Կըխնդրամ ատ քու ատռեսը շիտակ մը գրես։

Մնամ քու նամակիդ միշտ կարօտող, անոր ճամբան աշելով մանչ՝ Կարօ։

Դատ հրատարակեց՝ Վարդի-Փուշ

ՕՂԵՏԱՆԸ

—Ասացէք խնդրեմ, ով աւելի շուտ և արագ է կարողանում օդի խմել. գիւղացին, թէ ինտելիգենտը։

—Պարզ է որ գիւղացին, որովհետև նա ուտելու ժամանակ չունի։

ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Դատաւոր.—Այս քանի երրորդ անգամն է, որ քեզ զողութեան համար դատում եմ. թիւչ է ամօթ չէ։

Մեղադրեալ.—Ինչ էք հրամայում, պարոն դատաւոր, ինչու համար է ամօթ. ամօթ կըլինէր եթէ ես անպարծ մնայի, բայց ես աշխատում եմ. անպարծ չեմ մնում. ես էլ ապրել եմ ուզում. բա խօ չեմ կարող ուրիշների գործով գրպանել։

№3 ԲԻԲԱՌ №3

Գրական-քաղաքական-հասարակական եւ խրատողական օրաթերթ։

Բաժանորդագրութիւն չենք ընդունում իսկ հատավաճառին բոլորովին հակառակ ենք։

Տպում ենք 10000—15000 միանգամից զասարների վրայ փթով ծախելու. (օրինակը մասամբ վերցրած է «Հորիզոնից»)։

Խմբ.-հրատ. Գար. Երիցեանը, օգնական Վրոյրը, սրբագրիչ Սրինգը գրաշարապետ Խաչն իր գրաշարներով և ցրիչ Սարգիսը ցաւօք սրտի յայտնում են իրենց սիրելի և օրապակաս 2 կոպէկանոց օրաթերթ

„ԿԱՅԾԵՐԻ“

մահը, որը ծնունդ առաւ «Էպոխա» տպարանում և տեղափոխելով «Հերմէս» մրսեց ու կարճ հիւանդութիւնից յետոյ հանգաւ ի Տէր։ Ամբիծքը կը կատարի ամեն օր «Հերմէս» տպարանում։ Թաղումը տեղի կունենայ հաշիւները մաքրելուց յետոյ տպարանից դէպի խմբ. գրասենեակը։

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ

Առհասարակ մարդկութեան մէջ մի տեսակ սովորութեան նման բան է դարձել այն բնաւորութիւնը, որ մեզանից ամեն մէկը աշխատում է ուրիշի օրինակին հետեւել, առանց հաշիւ տալու իրեն, թէ արդեօք կարող է նոյն բանը ինքն ևս կատարել, կամ իր ասածները կընմանի՞ այն ուրիշի ասածներին, որից օրինակ է վերցնում ինքը, թէ միայն կապիկական շարժումներով պիտի իրագործի այդ բոլորը։

Այդ տեսակ մարդկութեան մէջ առաջին տեղն են բռնում այն հայերը, որոնք երկու անգամ գրչակոթ վերցնելով ու չորս անգամ թանաքամանը շուր տալով հազիւ յաջողեցնում են մի բան գրել և մինչև խմբագրատուն հասնելը տասնվեց ծանօթի մօտ կարդալով հասցնում են խմբագրին, իսկ միւս օրը իրենց այդ գրած ու շատերի մօտ գովարռնած դատարկութիւնը վերմիշելի կամ մակարոնի տոպրակի վրայ կարդալուց յետոյ իսկոյն մտածում են աշխատակցական պաշտօնից աւելի վեր բարձրանալ, այսինքն խմբագիր դառնալ։

Խմբագիր ձեռնադրելով ոնմիջապէս նորընծայ խմբագիրը, իր թերթի առաջին երեսին աշխատակիցների կեղծանունները ալֆաւիտով. շարելուց յետոյ, թխում է մի առաջնորդող, որի մէջ մեծամեծ խոստումներով հասարակութեանը կերակրելուց յետոյ բացում է ամբողջ տարւայ բաժանորդագրութիւն, այն ինչ իր թերթը երկու ամսւայ անցագրով է միայն աշխարհ եկել։

Ահա թէ ինչու «Բիբառի» խմբագիրը չկամեցաւ բաժանորդագրութիւն բանալ, կամ հատավաճառով տարածել իր թերթը, այլ որոշեց մուքթայասէր հայ հասարակութեան համար իր թերթը «Խաթաբալայում» մուքթա տպագրել։

Հրապարակախօս

«ԻՒ» և «ՈՒ»-Ի ԲԱՆԱԿՌԻՒ

(Նամակ խմբագրութեան)

Զուղուրէթ 2 մարտի

Բագրատի խանութում երկու բեբեցաւաճառ դարաչուխալներ մի քիչ կոնծարանած դրութեան մէջ մէկզմէկու չափից դուրս վիրաւորեցին, այսինքն նրանցից մէկը միւսի խօսքը կտրելով նրան անուանեց «ՒՒ» և իր խօսքի վրայ հաստատ մնալով մի քանի անգամ կրկնեց այդ տառը։

Միւսը, սաստիկ կատաղելուց յետոյ չկարողանալով տանել այդ իրեն անյաճոյ «ՒՒ»-ն հակառակորդին անուանեց «ՈՒ»։

Երկու հակառակորդները «ՒՒ»-նև «ՈՒ»-ն մէկզմէկու գլխով տալով այնքան վիճաբանեցին ու հայհոյեցին իրար, որ եթէ դվորնիկը չմիջամտեր, նրանցից մէկը կամ միսը հիւանդանոց տանելու կըդառնար։

Դվորնիկի հեռանալուց յետոյ նրանք մի փոքր հանդարտեցին, թէպէտ մէջ ընդ մէջ չէին մոռանում կրկնել իրենց «ՒՒ»-ն և «ՈՒ»-ն։

Արտ

ՀԵՌԱԳՐՆԵՐ

Խոջիվանք.—Մեռելները կարդալով քաղաքային խորհրդի որոշումը, որ այսուհետև գերեզմանների համար Խոջիվանքի վարչութիւնը իրաւունք չունի փող վերցնելու, որոշեցին վեր կենալ և քանի որ գերեզմանը մուքթա է՝ նորից մեռնել։

Զուղուրէթ.—Ձերբակալեցին 4 շուշագցողներ, որոնք գիշերները քարեր նետելով ջարդում էին պատուհանների ապակիները իսկ միւս օրը ակոշկիս շուշերի բղաւելով իրենց փշրած պատուհանների ապակիները նստեցնելով, տանտէրերից փող դուրս կորզում։

ԼՐԱՏՈՒ

Թիֆլիս. — Նորերս «Խաթաբալայում» լոյս տեսած «Քամի» թերթի խմբագիր պ. Կլան Ցակոբը իր թերթում մի հակառավարչական յօդուած զետեղելու առթիւ տուգանուեց 38 կոպէկով։ Խմբագրի և մի քանի դիրք ունեցող մարդկանց խնդրանքով 38 կոպէկ տուգանքը փոխարինուեց 14 ամիս բանտարգելութեան։

❧ Մարտի 3-ին Շաքրօ Զիրգիրեանը յայտնեց ոստիկանութեանը, որ ինքը Վորոնցովի արձանի մօտ ձեռքը կոխելով մի շատ լաւ հագնուած տիկնոջ գրպանը, և ոչինչ չգտնելով ձեռքը դիպել է դուխի սրուակին, որը կոտրուելով կտրել է իր ամենահարկաւոր ցուցամատը։ Տիկինը ձերբակալուեց։

❧ Նոյն օրը Սոֆիա Դատարկեանը յայտնեց ոստիկանութեանը, որ անյայտ չարագործներ մտնելով իր տունը և գողանալու ոչինչ չգտնելով մոռացել են մի անագին սափրոց, որի մէջ կամեցել են գողացած իրերը տեղաւորել։ Դատարկեանը խնդրում է չձերբակալել չարագործներին։

ԲՈՐՍԱ

Թիֆլիսի բորսաներում տրամադրութիւնը խառնուշտոր էր։ Հայ թերթերը նոյն դրութեան մէջ էին ինչպէս առաջ։ «Կայծերի» գինը մի կոպէկով աւելացաւ և յանկարծ բոլորովին ընկաւ։

Սալդատսկի բաղարի դրութիւնը անփոփոխ էր։ Լաւ բեբեցի ջուխտը ծախւում էր 30 կ., քիչ մանր 15 կ.։ Դոմբալի գինը հետզհետէ բարձրացաւ։ Իսպանախ չէր ճարւում։ Հաւը մորթած 1 բուբլի, սատկածը 80 կոպէկ, իսկ ֆայտոնի տակ ընկածը 70 կոպէկ։

Շեմիչկավաճառ Սօսոն հայ թերթերի խմբագրութիւններից տոպրակների համար գնեց 168 փութ տպած թերթ փութը 1 ր. 60 կոպէկով,

Թիֆլիսի նաւթի սկլադներում նաւթ շատ կար, իսկ շատ տներում նաւթ չունենալու պատճառով՝ նախ քան մթնելը քնում էին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Հալլաբար, 3 մարտի։

Անցեալ շաբաթ, յայտնի ատաղաձէտ և օրացոյցագէտ պ. Փարեմուզի օրացոյցում կարդալով այն դուշակութիւնը, որ «Բիբառ» թերթի խմբագիր խայտառակիչ պ. Բախշն այս ինչ օրը գաղի պովոսկով Դասպար Կալատուգեանցին ընդառաջ կըգնայ դիմաւորելու, ինձ առիթ է տալիս ձեզ ինդրելու, որ այս երկտողիս տեղ տաք ձեր պատուական «Բիբառ» թերթի համարներից մէկում։

Պ. Փարեմուզը մոռանում է, որ այժմ գաղի պովոսկաները այնքան են թանգացել որ այլևս չենք էլ տեսնում և մենք կարծում ենք, որ մի որևիցէ թերթի խմբագրի հազիւ թէ յաջողւի այդ գաղի պովոսկան տեսնել, ուր մնաց թէ մէջը բազմել։

Ինչու է մոռանում պարոնը որ եւրոպացիները մեզ խաբելու համար ոգիտոմոբիլներով լցրին մեր քաղաքը և մեր գաղի պովոսկաները իւրացրին։

Վերջերս, մեզանից ամեն մէկը գիտէ, որ Հալլաբարում միմիայն 2 հատ էր մնացել այդ գաղի պովոսկաներից և այն էլ մեծամեծ գումարներ տալով խլեցին մեզանից, ուղարկելով մէկը Արքուլ Համիդին, իսկ միւսը պարսից շահ Մամադ-Ալիին, որոնք ճիլորով կերակրւած ձիեր լծած շրջում են։

Գայջաղ

ՅԱՅՏԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ով կամենում է Վանքի փակում

ԹԱՂԻԵԼ

Մի փոքրիկ գումար ձեռքում սեղմած թող շտապի կոնսիստոր։ Դիրքի, կամ ով լինելու համար ոչ մի իսօսք։ 100—1

Խմբագիր-խայտառակիչ ԲԱԼԵՇՕ

Մեղադրանքը մեղմացնող պատասխան

—Ձեր քաղաքը, եղբայր, կատարեալ հարբեցող է, իսկ դուք կատարեալ խայտառակ մարդիկ եք...

—Ինչու՞ որ, ձեր մեծ...թիւն։

—Ինչու՞... վիճակագրութիւնն ահա տես ինչ է ցոյց տալիս...

—Ի՞նչ... ձերդ մեծ..թիւն։

—Այն որ 1910 թ. ձեր քաղաքի իւրաքանչիւր մի բնակիչ խմել է 10 վեդրո օղի։

—Բայց ներեցէք, ձերդ...թիւն, մենք այդ հօ միանգամից չենք խըմում... կամաց-կամաց, այնպէս օրը մի քանի... Ախր չէ որ մենք էլ հասկանում ենք ինչ է խմելը...

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

Վենծ ախպօրս

Թաժժա բանըմ պատմէմ, յիմացի, էսքանի օրըս իստէղ էին էկէ Թիֆլուզու լաւ դերասանները, ու թատրոն խաղցուցին. հըմդ էսօնք շատ թանկ կառնէն սէյրըճոցէն, էնպէս օր մէղի պէս քիսսիբ քիւսուբ տըղէքը չկոցան էրթա կլուբ, իտի լաւ թատրոնները տեսնելու։ Գօռ ու ջայլամ մէնք էլ յէքսի օրը կլուբի դռան յառաջը միւքթա թատրոնըմ տեսանք։ Կիրակի օր, բիթուն շէնլիկը պարապ, սէյրի էնք կայնէ, չունքի էրկու ղօջաղ տղէք եախա-եախի էկան։ Էտ էրկուն էլ թուղթ ու միւրաքեաբ ծախող են, յիրանք շատ բայլու, վայթէ դու էլ յիմացած էղնիս, մէկին, կսէն «Դուլդուրա», մէկէլին «Օրդի-բոզան»։ Ըշաը, իդի էրկու լուս ցրուցնէրը յիրար եալ կոծեցին, էլ ինչ չեշնցքիցցնէ՝ աշխարքիս յիրեսը, յիրար ու պռունդ ջառթեցին. հըմը. էդ՝ տուբ ու դմփոցի վախթը, ութքս, յընկաւ օղորմածիկ հաճի Համբարձում բեռիս, ըսի, հայ գիդի հայ. փոդը խապար տանի, հիմի պիտի էնիկ էղնիր օր, իսոնց հախէցէն գար— յիրան լաւ լաւ քիւֆուրներով. իսոնց յանկընչները ծածկել տար։

Խուլայսայ, վենծ ախպէր, Աստծու սըրտին մէսնիմ, քօռաղդի էտ գիւլաշճոնց մէկը վարժապէտ է (պղնձէ քաղքի վախթը), ըսէնք խօ էն վախթն էլ մէ մաթայմ չէր, հըմը բանմոր չէլնիկը էլի վարժապէտ անունը կուտա։

Հըլը էտից ջոկ, հիմի էլ կսէն թէ իստէղաց վենծ բանքի ջոջիրէն է. գիւվա էտոր խօսքով կեղնի բիթուն ելք ու մուտքը։

Տօ՝ ջանըմ, խօ էն մէկէլն էլ մէ պզտի ջանաւարըմ չէ, յինքն յիրան տնկլիկէնտ ցուց կուտա, քաղքի լաւ լաւ տղոց թայտաշ տղա է, յառաւօտնէ տէյմօր յիրիկուն զօռբա Օհանի թոռի պէս էսօր-էնօր վրայ տըրսխա կցէ կը, հէչ յինքն իրան չի տեսնի։ Ինչ օրա, վենծ ախպէր, օր մէղի պէս մէ քիսսիբ տղէմ էդպէս բան էնէր՝ սաղ քաղքի շէնլիկը, պիտի ըսէր, թէ զաթի էդտից վէվ լաւ բան գիւվամիշ կէնէ։ (Զէ, ախպէր ջան, չէ, մենք շատթի տէր տղա ենք, մէնք էդպէս խալթ չենք էնէ)։

ՖԵԼԻԵՏՕՆ

22 փետրվարի քաղ. Բաքու

«ԽԱԹԱԲԱԼԱ» ԿԱՋԷԹ ՏԱՃՈՂԻՆ

Խօսքս էլի մեր ծխահօր հէտա։ Ադէր! ընցած շաբաթ տու էլիր էն հարուստի հըրսընքուն. ինձ նրան համարըն կանչալ որ քանդիմին տարի առաջ թազա հարանին հարը, մարը, մին էլ ես մինտէղ փոռնդաշ ուխտընք քէցալ դալին կոխկին սուրբ Սարքիս ու Անդրեաս, մեռնիմ նրանց զօրութեանը. Աստուած տրանց խօխա եա բախշալ։ Քու կարքըա, օձուած մըրօքըա թօղ շնաղ ինի, վէր ես խաբարբզան, բանրանսող եա փախըլ չըմ, ամմա էն հըրատնըքուն նէէնց պանէրըմ տեսալ՝ որա ուսանիլ կարալ չըմ։

Տրանց հէտ սուրբ քնալուց, թազա հարսին հարը հղէն նաղը կանէր թա Ղալանբաքու կեալուց օխտը ամիս փոխնորթըս փոխալ չըմ, մէսը տարանը էրկու գոնում, դատիկ ջըրօխաննիք ըոխաւրս կընդնէր։ Զորս տրասի մալբրագլուէցի փրգոնչին չուրու Բաքու քրէհիցս բախշալա, որ հինչ ա հղէն մանգզիլ անէլուց, ձիոցը թըմարէմ, ջուբ տամ։ Բաքու մէր սաեղծողը լաւ աչքաւա եշալ տրան, տափը ծակալա նօթա պղացալ զօվլաթ շինալ. չոզոդին աչքը տուս կեա, գօղլու տէանա, ամմա սայըմ ասըմ թա, կարքը տի չի, ասէնք Աստուած տաւալա հէնց հօր կօնէն փոդը թիաւ տէն կածէն։ Ադէր. քու օշըտ իրատ չէր, կլօխըդ խառնուած էր զումարի օթախումն, ամմա իմ արունուս լափ նօթ տէռաւ մի փարա պանէր տեսնելուց, լաւ էլ խէյրն երկէնում երիսկոբոսով նշան անում վէր ուրանց տէրտէրա վսակալ, խէ՞ պէնդ չիլալ եա խայինութուն արլալ. էնքան քարի փոդ տալ կինի, ասըմըն մին կօլին երեսունըվեց հազար մանէթաւա առալ, օթ օթախի սարքը-կարքը քսանը իրէք հազար, ճնացած զումրրուդ, եաղուդ մարջանը վացցունից ավէլա։ Բօօ... բատի պան կինի, խալխին փիս օրինակնէրըն տառնըմ։ Բա մեր փօրը էն խօրագնէրը հօր կօնի. սա հինչա արգանածօղնէրին թաքաւորութիւնից եկած ծնէփակա, Ֆռանդըստանու գինի, դանի մէս Մօսկովի, խըզըլալքի բօզրաշու ամանաւ լիգը.— հինչ ծկնէր, հինչ դօշ բա... բա... բա ամմա զօնաղնէրին Աստուած մա բուփթ ու մուրվաթ տա. տեսնըմըմ բաղնը հացի քթալաւ հանց օտուսա խըզըլալան, հունց գիդաս թա խաւիծ ա։

Էս էն քան հէսաբ-քիթաբ գուդում չում, ամմա կօխկիս նատած մին կնէգ ասում ա թա էտ հըրսանէքը էրկու հարիւր հըզէր մանէթ ա նստալ։ Աստուած շնաւէր անի, մին պէրցի ծէրանան, սուրբ Անդրիասի զօրութունը սըրանց իրա իննի, խօխակօխ ինէն... ամմէն։ Էլի ասումըմ. վէր թահրը տա չի— օրէնք արէք, ձէռքատ փըռնող կաւէչ։ Գանձրը, իդի էրկու լուս ցրուցնէրը յիրար եալ կոծեցին, էլ ինչ չեշնցքիցցնէ՝ աշխարքիս յիրեսը, յիրար ու պռունդ ջառթեցին. հըմը. էդ՝ տուբ ու դմփոցի վախթը, ութքս, յընկաւ օղորմածիկ հաճի Համբարձում բեռիս, ըսի, հայ գիդի հայ. փոդը խապար տանի, հիմի պիտի էնիկ էղնիր օր, իսոնց հախէցէն գար— յիրան լաւ լաւ քիւֆուրներով. իսոնց յանկընչները ծածկել տար։

Խուլայսայ, վենծ ախպէր, Աստծու սըրտին մէսնիմ, քօռաղդի էտ գիւլաշճոնց մէկը վարժապէտ է (պղնձէ քաղքի վախթը), ըսէնք խօ էն վախթն էլ մէ մաթայմ չէր, հըմը բանմոր չէլնիկը էլի վարժապէտ անունը կուտա։

Հըլը էտից ջոկ, հիմի էլ կսէն թէ իստէղաց վենծ բանքի ջոջիրէն է. գիւվա էտոր խօսքով կեղնի բիթուն ելք ու մուտքը։

Տօ՝ ջանըմ, խօ էն մէկէլն էլ մէ պզտի ջանաւարըմ չէ, յինքն յիրան տնկլիկէնտ ցուց կուտա, քաղքի լաւ լաւ տղոց թայտաշ տղա է, յառաւօտնէ տէյմօր յիրիկուն զօռբա Օհանի թոռի պէս էսօր-էնօր վրայ տըրսխա կցէ կը, հէչ յինքն իրան չի տեսնի։ Ինչ օրա, վենծ ախպէր, օր մէղի պէս մէ քիսսիբ տղէմ էդպէս բան էնէր՝ սաղ քաղքի շէնլիկը, պիտի ըսէր, թէ զաթի էդտից վէվ լաւ բան գիւվամիշ կէնէ։ (Զէ, ախպէր ջան, չէ, մենք շատթի տէր տղա ենք, մէնք էդպէս խալթ չենք էնէ)։

Ջըցի տղին դուքանից բէրած ծնէփակին, գինուն չօրս հազարը ինը հարուր տասքարի տս—զաշի տս—ամմա մըտնէրատ քըցալքք քսիբներին,—հինչ կինէր, որ մին քանի հարուր մանէթ ղրկէիք հայոց սուտնարանին քասիբ մունթէրին, էս ցօրտ փըսունգուն տաք շորէր առնէին, կէց տային մունթէրնէլ, նրանց ծնօղներն էլ թազա փէսին հարսին օրթնէին. թաչինա չէ հարուսնէրին կանչմըք օտումն, խըմմըն եալի տամ տոն քընալուց դալանումն հազար մին ջուռա տընազ տամ։ Ադէր. մին էլ տու նըրանց տատ պիտի ինիր, վէր շիլըն ընգալ, էն վէց հարուր զօնաղնէրը պէտք էր սօրթ պա սօրթ անէր, շէնից թազա եկածնէրը մին օթախ տային, շնարում տասը տարուց ապրած շինացուց ջոկ օթախ, բաքուցուց մին էլ թօրքէրին զալը, ամա կընանօց թախտափուշին իխտեարը նրանց տար։

Հա, խօսքըս կէսատ ճնաց—ադէր, գիդումըս վէր ես փիս պանէր հօր չըմ օնում— հէնց հացը պըրծընէլի իրաէր զինքս քցէցի կօխկի օթախը, մին բունջում շընթըռնեցի —տէղէլ կնանաիքը արունուս սըցրին, էտ թազա մօդի պըրկը փոխան դարեա կէցացնէրը հինչուրն նման. թա Ֆռանդըստան կէնումըն, տա մին խօսք չի տէռաւ, շնօրք օնէն կէնալի, մանկեալի անըմըն, ամմա մէրունքը մանկալուց քիչա ճնամ ըոխներին իրան են ընգնին, կացնու բոյու քէթնէրը ճիջէխին։ Ադէր, էդ մօդ սիրող կնանօց ա-

Հիմի դու գիտէս, վէնձ ախպէր, դու մէզի էս զօլաղնէրէն ազատէ, չունքի էս խմօրը հելը շատ ջուր կըվերցնէ։ Կաղաչեմ քեզի էրթաս խեղաց Նիկիֆորի ցիրկի խազէինին խօսիս, բալքի իսի մէր գիւլաշճոցը յիրան քովը ընդունէ, թող ցիրքի մէջը անուն հաստատէն։

Դրանք հէրու էս վախթ էլի յիրար եալ կոձեցին, էլի էտ թերմաշ ուլիցի վրէն։ Կերևա թէ էտօնց յաչքերուն բան կերևա օր՝ կըդիվօտին։ Թէ բան է ցիրկի խազէինը ռազի էղաւ, ընձի մէ խապարմ էրա, բալքի Տօնականէնց Ցակոյի ժեշը լըծել տանք ու էրկի ձեռքն ու ոտքը կապած ֆօտ դրկենք, օր ճամբէն էլի յիրար եալ չկոձէն։

Հրամանիդ բաքլայող **Դարիբ-Զաւուշ**

ԳԱՆՁԱՊԱՀ

—Գանձապահ, ո՞րտեղ է պահեստի 75 հազար ռուբլու գումարը, հարցրեց բանկի կառավարիչը քննելով դրամարկղը։

—Ապահով պահուած է, տէր, ասաց գանձապահը կիսով չափ թէքուելով կառավարչի առաջ։

—Բայց արկղում չկայ այդ գումարը, ցուցակներում էլ չկայ, մատեաններում էլ աչքովս չի ընկնում։

—Անհոգ եղէք, տէր, բոլորովին ապահով պահուած է։

—Բայց ես ուզում եմ անձամբ ստուգել և տեսնել գումարը, չէ՞ որ ես պատասխանատու եմ։ Ցոյց տուր ինձ ծրարն ստուգելու։ Որտեղ ե՞ս դրել, դրամարկղը տակ ու վրայ արի, չը-գտայ։

—Այդտեղ չէ, տէր, իմ արկղիս մէջ եմ պահել։ Ես պատասխանատու եմ, եթէ կորչի, դուք բոլորովին մի անհանգստանաք։

—

Քարտուղար

—Հաշուապահ, ինձ ներկայացուր աւադի մատեանը և փաստագրերը, ուզում եմ վերստուգել աւանդները,—ասաց ընկ. նախագահը։

—Հաշուապահին նեղութիւն մի տաք, տէր,—ասաց քարտուղարը,—աւանդագիրքը ես վերցրել եմ։

—Վերստուգելու համար էք վերցրել, շատպեցէք վերադարձնել, ես պիտի քննեմ։

—Ո՛չ, աւանդները ես եմ պահպանում և ես եմ պատասխանատու աւանդատէրերին։

—Բայց ի՞նչ իրաւունքով դու իւրացրել ես հաշուապահի պաշտօնը և ի՞նչի դու պիտի պատասխանես աւանդատէրերին։ Շուտ գիրքը և փաստաթղթերն ինձ տուր։

—Ես... ես... աւանդի մատեանը ուղարկել եմ Պոլիս, փաստաթղթերը Թաւրիզ... չեմ կարող ձեր հրամանը այս տարի կատարել...

—Երևի աւանդներն էլ ճանապարհ են ընկել։ դէպի Փարիզ...

սի թա՝ քնածնէր, էդ պըրկը-փոխան դարեան վէց հարիւր տարիա մէր ղալին կոխկի Զարուսլլու շէնու թօրքի կընանիքը կէնումըն,—էտ դարի թահրը կաղէթումը տաճալըն, հէնցրք գիւղում, թա թաղա փասանա—չէ ջանրս ձէզ մատաղ հէնց բէսըփաթ շըլափոց համար հարցրէք ղալըցուց, սիսեանցուց եա զոկերին, լոխ կասէն. վէր թա էտ շիլափին թահրը երա կալած ղալին թոփխանու բախկալ Ծատուրին մաձունու, պըզկաթանու կիւշէրի թահրից։

Ուրանքըն գիղում, իմ պանրս չի. հա նա ի ասում. մէնք մօղա եա, համէլ լուսաւորութիւնա ջոխտ-ջոխտ նըստըմըն մին կնէգ արմագ, մին էլ տըղամարթ ստօլի ղումարին տամ։ Թէ էլ ասում չըմ թա ստօլին տական վէնէրաւ ուրուր մէս հունցուն օտում։ Ամա աջըղս եկաւ չօրս խոխատէր ծամը կտրած մին կընդանա, մին լակօտու (վիզին չաքուչընա կացին կոփցըրած) հետ սիլի բիլի անէլը, կարտի փար պէնալը—եսօվ էլ եր կացաւ չօթքաւ կանաչ ստօլին իրէսը սըրփաւ էդ օղլըշաղին նարգան ջուր թավազու արաւ, ստօլին իրան մէլաւ ստի պան կիրէց։

Սիրելիս, խնդրեմ անուշ արէք նարգան,
Ու պահանջեցէք ամուսնուցդ ապահարգան,
Իսկ եթէ, այդ բանը չընդունի քո եարը
Հասկացրու որ դա է պահանջում XX դարը։

Կարթալուց, լափ մէչքրս քըրթնընքաւ, ջուր տէռաւ։ Ադէր! բա խէրս բէրանրա ջըրաւ լըցրալ։ Թու կուրկուփ արալ, սուս արալ, խէչրս էդ սում առնողներին ասում թա՝ մենք ղըրկալընք ձէզ վէր մէջ սում առնէք կեաք մեր խէլքը, աչքները պանաք—լաւ լաւ պանէր սըբրցնէք, ախբը մէր գովրին մին քուրսու տակին ասիր—տրրանց, տասերօթ մարթընք քօն իլալ, գոնաղ, գոնշի, մրրաքօր տըղա, թաղա հարս, պառաւ կնէգ—սկի հումին էյնաւը կըկեար թա խայինօթուն, ծօռ աչքաւ մըտէկ կանի ուրուր։

Բօօ... քընամըք, մարթը մին արկաթի կտոր շլափկանէրիդ կըպցնում, եա տէռնում մարթը կընգանա հանում, քուրը տխպօրան, տղան մօրան. բա տի հայի օրէնք հաւատ, կանօնա կընի. էհ ջահիլ աղջկօրցը հունց ջուսա գիրանքըք տամ, վէր քըշէրնէրը մօրից թաքուն կարթըմըն ըռութանա իրէսնէրին մըտէկ անիլ չինում, սըփարթնած. աչքներին տակը կըպտած, Աղարէկէնց ծօրին նման խօր ընդած։

Ադէր! ձեզ համար խըրատէլը, քարօգելը սարփ չի, ֆնասա ջուրի, խէ իս չօլըմ, եա Արդաբիլ չըմ մըծացած—խօսքի, էս բարիկէնթանին յիցցուն պակըս արալ, դաչից, Կիսլավոդսկուց, եա դալան սեկտեմբերին եա տէռնալուց, մին քսանին «վասրն ազատութեան» թօղտրս տալու, մին էլ փօղաւ խօսք կավէչ օրիշներին իրա թաղա փսակէս...։ Բօօ, տէնց գալուրից մարթ նա էլ տէրտէր մըռըքրշութուն, եա նաղ կանի... լափ ինձ քօնհլած գիղալ մեր

—ինձ շատ լաւ մանլումմա ձեր մին փարա արարմունքը. թօրքը, զօրթա անօէնա ամա բաղի խօսք օրինաւէր. «եախընը օթթըյըրսըզ, ուզախը գեօզաթիյրսըզ» դուք մեռալից շատրք օղում, քանց սաղից, փասկէլուց շատրք օղում քանց կընքէլից։

Հինչևիցէ—ես սարմ գիղում, վէր դէրէրին ծէրուա շորերումը քանի ջուրա ինում. փարաջին էրկու դօշի ջուր, լաստիկ արխալուղին էրկու դօշի, էրկու կօխկի (տրրանցանա մինը նասա, ձութի անունիեա-տէղ տէրէրը քըցըմըն ջնաս փսակին մին էլ պիջէր կընքէլի ստացած փողը), բումազէի արխալուղին էրկու դօշի, էրկու կօխկի (ատման մընը մին բուսէթու խօզի կօճի կըտանի) էրկու էլ շալվարի։ Հունց վէր հօքէտոր մարթ, մեր Փըրգիչին տասնը էրկու մունթա իլալ դուք էլ նրան պատիւը, հուրմաթը պահելի համար 12 ջուրքք պահրմ, օրթնվէք դուք. բա դրանց օվթան հունց կըկա, հիր կըլըցնի։ Իմ կարճ խէլքաւս պէտքա ջուռ բա ջուռ թօղտէր ձեռնը քաշէք, բա հինչա փօղաւ, ինքն էլ նաղտ կլխան...

«Վասրն ազատութեան» «վասրն անաւնակոչութեան» վասրն ծընունութեան «վասրն ֆանտախրիրթեան» վասրն... վասրն...

Ադէր, քեզ հետ էլի պան օնէմ։

Մնամ Զաուի Խօնաչինցի



ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

ՄԻՆ ՊԸՐՈՎԸԳԻՐ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԴԵՈՋԱԼԻՆ

Մատաղ իլամ քեզի, այ դեօզալ. բիազի վախտ պարովագիրեր իր կիրիմ «Խաթաբալին», ես ալ կարթըմի. սըրտս մին քիչ արխային էր իլիմ, համմա շատ վախտս չամ իմանըմ քեզ հինչա իլալ քի, իսկի մին պիան չես կիրիմ, չամ իմանըմ, ազատամիշ իլալ քի, «Խաթաբալան» քո սրնտիտ ուղածը չի կատարալ. մախլաս շատ սըրտս նեղացած, ֆիքը անիլով, նստածի Նաջարովանց քորփիի անգողին, բիրդանքի ֆիքը ինձի տարա, պուօշ անանց ճաքեց քի, հանց իմանաս ազդաշի սինէյլազ իլեր։ Մեր բիթուն թաքուն-թաքուն փանած պիանները, քեֆերը՝ եկան առաջիս զարալի զամբալութի պէս շարեցին. այ գիդի ջահիլ թիւն,—այ գիդի կնիկ, զորթան ասալ քի, կնկան սըրտը խարաբա բաղի պէս մին պիանա, հինչքան անպէտք խօտ ասես տիւս կիկայ, տիւ ալ կնիկ ես, քու ալ սըրտտ նրա խուսանա. հինչ արած, տա աշխարքի պիանընա, հանց քի քինացիր Բաքու, ան սահաթին իմացա քի, լիաւ-լիաւ լօթիներ իս քիթանալու, ինձի մըտքատ քիցիլու ես, հանց անանց ալ իլաւ, Բաքուի լօթիներան չքուշտացար, հիմի ալ Տիֆլիսի լօթի—Խաթաբալին ես ձեռք քիցալ, տա շատ լիաւ աս արալ, թուրքի առակը հարգանդ ասըմս «լօթուլուդ թարք գեօթըմազ», համմա աս ջուռա լօթիին, ես ալ իմ ջանս զուրբան կանամ, չունքի քիար տեսնող լօթի ա, տիֆլիսեցի ա՝ դարդիմանդ կիլի, տա ալ քեզի թաքուն ամ ասըմ, նրա մօտին չասես քի, նա ալ շըլլաղ տա, անվախտ պիանդ պուրթ ա։ Դեօզալ մարթի պիանը ռատին կիալիս ձեքան բրախ չպիտի տայ. քեզի թաքուն անգոջիդ մին քանի պիան ասամ. «Խաթաբալին» ասիր, նրանց հետի մին պլան քաշի, ես նրան չամ ասիլ, առաջանքի, նրան չամ չնանչըմ. միանալքի, նամուսս դարուլ չի անիլ. համա քի տիւ ասես, ասիլիա քու ան սև սև աչքերըդ մին նրա վերայ քիցես, ձիւնի պէս հալիլիւս, ալդան ասածդ անիլուս. դէ անգոջ դիր ասամ.

Առաջի գլխան մին զարոլչի ղրկի, մեր հին ժաման քանդած կոճերին տախտակներին, դուռներին, ժեշտերին, ղրսին ջուռաբա ջուռա պիաներին քամիայն, թօռան, ձիւնան, հար պիաներան զարոլ քաշի քի չփուչանան, չունքի, 4—5 հազար մանէթի պիաներ կար, հիմի տեղըմը կէսը չմնացալ։ Մին լաւ ջահիլ եպիսկոպոս ղրկի քի, բալքա օխտը տարինը մին չեն քինա ուսումնարան, տեսնի, դուռները հինչ պէսա կապած, պինդա քի բօշա, մինալ քի վարժապետները հօվան, գիրիլ կարթիլ հայերան ըմանըմանն, քի չէ։

Մին տիւժին ալ բուլախտներ ղրկի, մեր հին երեսփոխի հեսարները բալքա ածացունան, չունքի մեր քեօհնա երեսփոխ, խոյեցի Աթանեսը, դաֆտարները անքան թամիզա պահալ քի, հար պիանը թամիզա իլալ։

Մի լիաւ երեսփոխ ղրկի, չունքի մեր երեսփոխը շատ խոռվոդ ա. հար խոռվիլիս 3 ամիս մի բաշա քինամ. համա թափշոր անի քի, գիալիս մեր շարադիլի քոյան քի, հանց հըղնի վերայա, մին լաւ դագանակ կորի, պիրի հետանքի, մօդին հազիր իլի, հովքի չումուշքով, մասով, կալոշով ժամ մանի, ժամի թողտա քարի պօլերը կեխտոտացունի, քիալլին անանց դինի քի, ջանը մինչին տիւս կայ. օխտա չէ, մեր ժամ եկողները հանցան ըմանըմ քի, ժամը դարբախանի բազարա...

Մին սիրուն քարոզիչ ալ հարկոօրա քի, մեր բարինեերին քարոզ տա, Աստուծու հըղնան տիւս չկան, բիալքի մեր Սանուել վարժապետը ալ դինջանայ, շտպատը մինչին աս ցեխով դիամաթով չուխուր-իւրա ալ չիքինայ։

Մին քանի պիաներ ալ հալիա կան, նա էլ հետով կիկիրամ, թող մին աս կիրածների սարանջամ անի։

Դէհ, Դեօզալ, հալալ դայ ճնաս պարով. ազանամ ասածներիս մին սարանջամ իլաւ ալդայ կիգիրամ։

Քոռ Վանօն, համբալ Սերգին քեզի շատ շատ պարով կանան։

Մնամ քո աչքերիդ կուրատ,
քո դատիմի աշնայ

Դիլզադ.



Որբերին

Մի խումբ այրիներ կանգնած խնամակալի առաջ խնդրում էին նրան, որ ամուսինների ժառանգութիւնից հասանելիք գումարներից իրենց ապրուստ տայ։ Խնամակալը նրանց անվերջ պահանջներից ձանձրացած, մանաւանդ սիրտը չէր ուզում իրեն աւանդ տրուած հազարներից բաժանել, երկար մտածելուց յետոյ պատասխանեց այրիներին.

—Այս ժառանգութիւնը ձերը չէ, այլ ձեր որբերինն է, դուք իրաւունք չունիք դրամ պահանջելու, որբերն էլ անչափահաս են, ես նրանց չեմ կարող փող բաց թողնել։ Պէտք է ըսպասէք, որ որբերը մեծանան, իրենց ժառանգութիւնը ստանան, կամ թէ պիտի համբերէք, մինչև որբերի ծնողները յարութիւն առնեն։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑ

(Անկէտ)

Մեր, կաթողիկոսական հարցի մասին արած դիմումներին պատասխանել են հեռաւոր անձինք, հեռաւոր կարծիքները։

—

Նախ քան իմ կարծիքս յայտնելն ես ուզում եմ յիշեցնել մի կարևոր դէպք։ Դեռ երբ ես երիտասարդ էի և լաւ, եթէ այսպէս կարելի է ասել՝ փառուհեղ մի բուռ ունէի, ինչպէս և հիմա ունեմ, ես ուզում էի, որ ինձ վարդապետ ձեռնադրեն, բայց այդ ցանկութիւնս խոչնդոտի հանդիպեց և չիրականացաւ։ Այժմ ես այն կարծիքին եմ, որ եթէ ես վարդապետ ձեռնադրուած լինէի, հիմա, իմ կարծիքով ամենաարժանաւոր կաթողիկոսացուն ես կըլլինէի։ Բայց աւաղ... Սուգ զգեաց Հայաստանեայ եկեղեցին... և ես վարդապետ չձեռնադրուեցի... Հայերից ով չգիտի որ ես շիտակ մարդ եմ... հետեւաբար առանց դէս ու դէնի կըյայտնեմ ես իմ անկողմնապահ կարծիքը։—Կաթողիկոս ընտրել մի այնպիսի հոգևորականին, որ երբէք դէմ չլինի ւ-ի գործածութեան, որովհետև դրանով կիմանանք նրա արժանաւորութիւնն ու մեծութիւնը։

Ահա իմ կարծիքը։

Մնամ աղօթող՝ Ղազարոս Աղայեան

—

Ներկայ ժամանակում հոգևորականութեան մէջ, ինչպէս ասած, չի կարելի ասել թէ արժանաւոր մարդը չկայ կամ կայ, նոյնպէս չի կարելի ասել, որ նրանց մէջ մի պատրաստուած մարդ կայ, կամ չկայ։ Դա սխալ կլինէր, որովհետև ներկայ պայմաններում, այսպէս թէ այնպէս, կաթողիկոսը հայ ժողովրդի կուլտուրական ու շինարար գործի մէջ դեր է խաղալու, հետեւաբար նա պէտք է լինի, այսպէս ասած, շատ թէ քիչ, լիովին կամ թերի կերպով, գոհացուցիչ բաւարար պաշար ունեցող մի անձնաւորութիւն, որ կարողանայ տնտեսել ժողովրդի և եկեղեցու շահերը և կուլտուրական կամ, այսպէս ասած շինարար և առաջադիմութեան գործի բարգաւաճմանը նպաստող։ Մեր կարծիքով, միանգամից, ի հարկէ, չի կարելի ասել, ում ընտրել, ում չընտրել։ Դա կըլլինէր, այսպէս ասած՝ ան*)... ժողովուրդը ինքը եթէ նա գիտակցում է կաթողիկոսի անհրաժեշտութիւնը, ախ, այսպէս ասած կարևորութիւնը, նա էլ կարող է իր ցանկութիւնները յայտնել այդ մասին։ Մենք այս ասում ենք ենթադրաբար և ոչ թէ որոշակի, այսպէս ասած, կերպով կամ հիմունքներով։

Կարծեմ ամէն ինչ պարզ է։

Ալէքսանդր Քալանթար

(Կըշարունակելի)

Ֆօն-ՍահՀենսօն

*) Ծանօթ. պ. Քալանթարը խառը գրելու սովորութիւն ունի, այնպէս որ այս խօսքի շարունակութիւնը չկարողացանք կարդալ. թողնում ենք ընթերցողներին եզրակացնելու։

Ֆ.-Ս.

ՃԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՐԷՖՕՐՄԱՆԵՐ

—Ա՛յ թէ մի ռէֆօրմ էլ լինէր, որ նորից ճորտութիւնը վերականգնէր... գէթ մեր՝ ազնուականներիս պարտքերը բաժնուէր և մի հարիւր հազարական ռուբլիներ էլ մեզ ընծայէր. ահա թէ բան կլինէր հա։

—Ես այդ դէպքում որսորդութիւն կանէի. շունս կլվերցնէի, հրացանս ուսիս գցած, ասր ու ձոր կընգնէի...

—Իսկ ես... ես, ես անպատճառ մի բուֆետ կբացէի. ես ամէն օր գոռի միս ու կախէթուն կուտէնայի։

—Դա էլ լաւ է... ոչինչ, լաւ միտք է։

ՍԿԶԲՈՒՆՔԱՑԻՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐ

Ժուժկալութեան ընկ. պաշտպան

Բարոյականութեան քարոզիչ

Մոդայի թշնամի

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՓՕՐԻԶՄՆԵՐ

(Վ. Շէքսպիրից)

—

Իսկական, ճշմարիտ յոյսն արագասլաց է, թռչում է ծիծեռնակի պէս. թագաւորներին նա դարձնում է Աստուած, իսկ հասարակ մահկանացուներին՝ թագաւոր։

—

Թշնամին ինքը կոպիտ է, և չէ ուզում, որ իրա հետ կոպիտ վարուեն...

—

Վրիժառութիւնը սահման չէ ճանաչում։

—

Օրէնքի էութիւնը մարդասիրութիւնն է։

—

Գթասիրութիւնը օրէնքի առաքինութիւնն է։

—

Հասարակութիւնն օգնել չի կարող նրան, ով սիրում է առանձնութիւն։

—

Գատ բանը չպատժելով ու թոյլ տալով՝ մենք հրամայում ենք այն կատարել։

—

Շատերը մեղաւորութեամբ բարձրանում են, ուրիշներն առաքինութիւնից կործանւում։

—

Ոչ իշխանութիւնը, ոչ էլ գահը չեն կարող այս աշխարհում մարդուս պախարակելուց ազատել։

—

Լաւագոյնին ձգտելով՝ մենք յաճախ լաւն էլ ոչնչացնում ենք։

Գ. Բարուրեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացւած է 1911 թ. բաժանորդագրութիւն

„ԼՈՅՍ“

Գրական-Հասարակական շաբաթաթերթի։

(Երկրորդ տարի).

„ԼՈՅՍ“-ի բաժանորդագինը.—Ն. Նախիջևանի, Ռոստովի ու շրջակայ հայ գիւղերի համար տար.-3 ր. կէս տ.-2 ր. 3 ամ.-1 ր.։ Ռուսաստանի այլ տեղերի համար—տարեկ. 4 ր., կէս տար.-2 ր. 50 կ. և 3 ամ.-1 ր. 50 կ.։ Արտասահ. տար.-6 ր. կէս տարին 3 ր. Համարն ամեն տեղ արժէ 10 կոպ.։

Հասցէն՝ Нахичевань н-Д. Въ редикцію армянск. журнала „ЛУЙСЪ“.

Խմբ.-հրատ. Բժ. ԳԷՈՐԳ ՌԷԻԶԵԱՆ

Ցանկանալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիքներ մինչ խորհուրդ ենք տալիս բաժանորդագրուել և ամենօրեայ հայերէն ամենամեծ ու օգտակար

III ՏԱՐԻ

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

III ՏԱՐԻ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ դեկտեմբերի 1-ից հրատարակւում է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը։

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» տարեկան բաժնեգինն է 10 ր., կէս տարւանը 6 ր. Սակայն «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք գիջել և տալ հետևեալ գներով.

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“ ԵՒ „ԽԱԹԱԲԱԼԱ“ միասին

Տարեկան . . . . 12 ր. ◎ Երեք ամիսը . . 4 ր. — կ.
Կէս տարին . . . 7 ր. ◎ Ամիսը . . . 1 ր. 50 կ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Сурандакъ“,
Հեռագրով՝ Тифлисъ, „Сурандакъ“

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԴԻՐՔՈՎ ԱՌԱՋԻՆ ԱՐԱԳԱՑԻՊ ՄԵՔԵՆԱՆԵՐ

ԽՐՕՄՕ-ԼԻԹՕԳՐԱՓԻԱ

Ա. Ի. ՌԻԽՈՎԻ

(ԵՐԵՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ)

Գօլովինսկի պրոսպեկտ, տուն Օքոյեանի, տելեֆօն № 433.

Յայտնում է ի գիտութիւն պ. պ. պատէր տուողների, որ վիմագրատունը ամբողջովին իմ սեփականութիւնը դառնալով, նշանաւոր չափով ընդարձակւեց և ունեցաւ նոր կօնստրուկցիայի և ամենամեծ դիրքի արագատիպ մեքենայով՝ իր բոլոր օժանդակիչ պարագաներով։ Այս հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս պատէրները կատարել շուտ, ճշտութեամբ եւ ԱԻԵԼԻ ԷԺԱՆ միւս վիմագրատներից։ Ցանկանալով վիմագրական գործը Կովկասում հասցնել իր արժանի բարձրութեան, ես չեմ խնայելու ոչ մի ծախս, որպէսզի բաւարարեմ ժամանակակից տեխնիկային։ Յոյս ունիմ, որ պ. պ. պատէր տուողները, առանց ուշադրութեան չեն թողնիլ վերև յիշածներս և կըպատւեն ինձ իրենց պատէրներով, իսկ ես իմ կողմից ամեն ջանք գործ կըդնեմ բաւարարելու պահանջները։

20—16 *Ցարգանքներով—Ա. Ի. ՌԻԽՈՎ.*

ՊԱՏՐԱՍՏԻ ՍՊԻՏԱԿԵՂԷՆԻ ԽԱՆՈՒԹ

ԿԻՐՃԲԱՌՈՒՄԻ ԵՒ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

Գօլովինս. պրոսպ. տ. Զուբալովի

ՍԵԶՈՆԻ ՀԱՄԱՐ ՍՏԱՑՒԱԾ

ԵՆ *մեծ քանակութեամբ ամեն տեսակ ապրանքներ—ռուսական և արտասահմանեան ֆաբրիկաներից։ Բոլոր ապրանքները ձեռք են բերւած առաջին ձեռքից և նշանակւած են* **ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐ**

Օտար քաղաքների պահանջները կատարւում են

ՇՈՒՏԱՓՈՅԹ ԵՒ ՃՇՏՕԷՆ

00—4

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

ՄԱՐԱԼԼ

կոմպլէկտներ

ՇՐՋԵՂ ԿԱԶՄՈՎ

1906 թ. . . . . 5 ր.
1907 թ. . . . . 7 ր.
1908 թ. . . . . 7 ր.
1909 թ. . . . . 7 ր.
1910 թ. 7 ր.

Հին համարները հատով Թիֆլիսում 10 կոպ., Թիֆլիսից դուրս 12 կ.:
Դիմել՝ «Խաթաբալա»-ի գրասենեակին:

ԲԺԻՇԿ

ՓԱՆՈ ՄԱՆԴԷՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր սեփ. տանը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.

00—73

МАГАЗИНЪ

Композиція

Тифлисъ. Пушкинскіи пассажъ № 8

ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ

шведскаго композиціон. бѣлья.

Носитсяъне менѣе двухъ лѣтъ

Постоянный большой выборъ свѣжаго товара.

Воротниковъ, манишекъ и манжетъ.

по фабричнымъ цѣнамъ.

Передѣлка въ любой фасонъ безплатно

Продаются портняжныя принадлежности, какъ-то пугоицы, подкладки, мѣлъ и впрочѣе.

Имѣется также галантерейный Отдѣлъ

00—34 М. А. КАЛТАКЯНЦЪ

ԲԺԻՇԿ

Ե. Ի. Մինասեանց

Ներքին և երեխայոց և ատամոքսա-աղիքային հիւանդութիւնների, պրոֆ. MATHIEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում:

Ընդունելութիւնը առ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.: Ելիզաւետինսկայա, 39: 100—73

ВСѢМЪ—ВСЕГДА—ВЕСЬМА НУЖНО

„ГУРЪ-ГЕРЪ“

IV. Ч. I.

Способъ быстраго, легкаго и точнаго исчисленія процентныхъ и другихъ денежныхъ интересовъ отъ минимума до максимума.

Вычетъ % %. 5% государственнаго налога. Дисконтъ. Процентное число. Стоимость 1-го, 2-хъ, 3-хъ и 4-хъ поленныхъ саж. дровъ въ вершкахъ. Цѣна пуда въ фунтахъ. Годовой приходъ въ дняхъ. Цѣна и количество товаровъ.

СКЛАДЪ У АВТОРА

Адресъ: Кавказъ, Александрополь, Петру Д. Гайказуни.

Цѣна одинъ рубль.

Изобрѣтеніе того-же автора:

„ГУРЪ-ГЕРЪ“ I. Указатель процентовъ, . . . цѣна 80 коп
„ГУРЪ-ГЕРЪ“ II. Исчислитель процентовъ „ . . . 50 „
„ГУРЪ-ГЕРЪ“ III. Табличка . . . . . „ . . . 5 „

10—10

ԾԱԽԻՈՒՄ ԵՆ ԱՏՐՊԵՏԻ ԵՐԿԵՐԸ

ՎԻՊԱԿԱՆ

ԵՐԿԵՐԻ ՓՈՂՈՎԱԾՈՒ

«Պատկերներ», տասը պատ. թիւրքահայերի կեանքից. . 1 ր. — կ.
«Վիքեալայի գաղտնիքը» » » . . 1 » — »
«Ալմաստ», 1 հատոր » » . . 1 » — »
«Ալմաստ», 2 » » » . . 1 » — »
«Զաւահիր», 77—78 թ. Ռուս. Թուրք. կուիս արկած . . 1 » — »
«Վիպակներ», երկու վէպ. թրքահայերի կեանքից . . 1 » — »
«Բժժածները», երեք պատկեր » » . . 1 » — »
«Կարելի՞ է սիրել», պատմական վէպ . . 1 » — »

Ընտիր բղի վրայ իւրաքանչիւր հաս, 2 ռուբլի

«Խև Կարապետ», թրքահայ կեանքից . . . . 1 ր. — »
«Քոռ Եղիկ» » » . . . . — » 30 »
«Շինոց» » » . . . . — » 30 »
«Ժառանգներ» » » . . . . — » 30 »
«Բերսայի Առաքելը» » . . . . — » 25 »
«Թուլումբաջիներ» » » . . . . — » 15 »
«Դիմակներ», երգիծական արկածներ . . . . — » 50 »

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

. . . . 1 » — »
«Շուշան», երեք արարուած. թրքահայ կեանքից . . — » — »
«Սարրաֆ», հինգ » » » . . 30 »

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

«Խիլլաֆաթ», պատմ. տեսութիւն Սիւննիների մասին . 1 » — »
«Իմամաթ» » » Շիաների » . — » 50 »
«Հողատիրութիւնը Կովկասում» . . . . . — » 10 »
«Մամեդ-Ալի-Շահ» . . . . . 1 ր. — »
«Իմամաթ» . . . . . 1 ր. — »
Рахимъ-Ханъ «Сардаръ» . . . . . — » 20 »
Бабыты и Беханты. Истор. разсл. цѣна . . . — » 60 к.
Արդէն պատրաստ է «Իրանի Պատուհասները» գինն 1 ռուբ.

Դիմել՝ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը:

Атрпетъ. Александрополь.

որոնց կը լինի սովորական 20% զիջումն: 00—23

Ժամանակաւոր խմբագիր Ս. ՄՈՒՐԱՑԱՃԵԱՆ

Электропечатня Т-ва „Культура“, Вельяминовская, 18.

Հրատարակչություն Ազգային գրադարանի

Հրատարակչություն Ազգային գրադարանի

Հրատարակչություն Ազգային գրադարանի